ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 135

Ք. Մարտունի 19.03.2025

Առաջարկում եմ ավագանու քննարկմանը ներկայացնել << Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի, Ներքին Գետաշեն բնակավայրի Վերին Դեմեր թաղամաս 4-րդ փողոց 32 հասցեում գտնվող թիվ-1, Ներքին Դուրան թաղամաս 10-րդ փողոց 28 հասցեում գտնվող թիվ-2 խորքային հորերի և Գետափնյա թաղամաս 3-րդ փողոց 11 հասցեում գտնվող պոմպակայանի ոռոգման նպատակով, անհատույց օգտագործման կարգով <<Գեղարքունիք>> ՋՕ ընկերությանը շահագործման հանձնելու վերաբերյալ հարցը:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ և
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՕՍ/Ի 286 մտ.
ստանալու հշվ/ց
78.1 46.2-286 գրա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ
ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ

հեռ. 094 44 20 74

էլ.Փոստ՝ nerqingetashen.gegharquniq@mta.gov.am
Հասցեն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ,Մարտունի համայնք
Ն. Գետաշեն բնակավայր Կենտրոն թաղ. 5փ 7 շենք

№ 35
13/03/2025թ

Մարտունի համայնքի ղեկավար
Պարոն՝ Հ. Հովեյանին

Հարգելի պարոն Հովեյան

Ներքին Գետաշեն բնակավայրում համայնքային սեփականություն հանդիսացող Վերին Դեմեր թաղամաս 4-րդ փողոց 32 հասցեում՝ թիվ 1 և Ներքին Դուրան թաղամաս 10-րդ փողոց 28 հասցեում գտնվող թիվ 2 խորքային հորերի վերաբերյալ 01/07/2015թ-ին Ներքին Գետաշենի համայնքապետարանի և ,,Մարտունի,, ՀՕ ընկերության հետ կնքվել է գույքի անհատույց օգտագործման, անժամկետ պայմանագիր, որը պատշաճ կարգով իրականացվում է, սակայն համայնքի ավագանու համապատասխան որոշումը բացակայում է:

Միաժամանակ հայտնում եմ, որ բնակավայրի բնակիչ Աշոտ Գառնիկի Կիրակոսյանի կողմից Գետափնյա թաղամաս 3-րդ փողոց 11 հասցեում 1990-ական թ-ին կառուցվել է պոմպակայան, որի միջոցով ոռոգվում է Գետափնյա և Ներքին Դուրան թաղամասերը, որտեղ ոռոգման այլ միջոց չկա: Նշված պոմպակայանը 2000-ական թ-ից անհատույց օգտագործման կարգով մինչ օրս շահագործվում է ,,Գեղարքունիք,, ՀՕ ընկերության կողմից: Նշված պոմպակայանի վերաբերյալ նույնպես բացակայում է համայնքի ավագանու համաձայնությունը:

Խնդրում եմ Ձեր միջնորդությունը Ներքին Գետաշեն բնակավայրի թիվ 1 և թիվ 2 խորքային հորերի և պոմպակայանի շահագործման վերաբերյալ հարցը քննարկել համայնքի ավագանու առաջիկա նիստում:

Հարգանքով՝

Վարչական ղեկավար Ռ. Զուլոյան